

Հայաստանի ազգային գրադարանի Շրջիկ գրադարանի /Բիբլիոթեկա/ այցը Տավուշի մարզային գրադարան

2015թ. գրադարանային երեկոյի շրջանակներում «Դարձիր գրադարանի բարեկամ» խորագրի ներքո հայտարարվել էր գրքահավաք-ակցիա՝ «Օգնենք սահմանամերձ գյուղերի գրադարաններին»: Նպատակն էր համալրել Տավուշի և Սյունիքի մարզի համայնքային գրադարանները: Գրքահավաքին մասնակցել են Հայաստանի ազգային գրադարանը, Ավ.Իսահակյանի անվան քաղաքային, Խնկո Ապոբ անվան ազգային մանկական, ինչպես նաև մարզային գրադարանները:

2016թ. մայիսի 31-ին Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն Հասմիկ Ղազարյանը և Հանրության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը այցելեցին Տավուշի մարզային գրադարան: Հավաքված բազմաքանակ գրականությունը կնվիրաբերվի Կողբ, Կոթի և Ոսկեպար համայնքների գրադարաններին:

31/ 05/2016